ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 12 հունվարի 2021թ.

Ժամը 14:30

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Հանձնաժողովի նախագահ՝

Լիլիթ Ոսկանյանը՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ

Անդամներ՝

Տիգրան Ոսկանյան՝ Գլխավոր ինժեներ

Հրաչյա Համբարձումյան՝ ՏՏ մոնիտորինգի պատասխանատու

Հանձնաժողովի քարտուղար՝

Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2020թ. դեկտեմբերի 29-ին gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2021թ. հունվարի 12-ը ժամը 14:30-ն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Հասցե	Ապրանքի անվանումը	Գնային առաջարկը առանց ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	Գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/	Նախահաշվային գին/հազ. ՀՀ դրամ/
Չափաբաժին 2						
1	«Մաքրություն» ՍՊԸ	Ք. Երևան, Ն. Շենգավիթ, 10փ., 14/2	Կարմիր ավազ	9850.0	9850.0	9900.0

Ընթացակարգը կազմակերպվել է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

3. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

«Մաքրություն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին:

4. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5. **Բանակցություններ՝**

Հաշվի առնելով, որ «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բացման նիստին ներկա էր մասնակցի ներկայացուցիչը, ուստի համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա) մասի գնահատող հանձնաժողովը որոշեց անցկացնել գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում «Մաքրություն» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով նվազեցված գնային առաջարկ չներկայացվեց:

6. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Մաքրություն» ՍՊԸ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից 2-րդ չափաբաժնի մասով:

«ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարվում է չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /ոչ մի հայտ չի ներկայացվել /:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-20/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը 2-րդ չափաբաժնի մասով՝ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց էլ. Փոստի /easm.himnark@gmail.com/ միջոցով ծանուցել «Մաքրություն» ՍՊԸ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին 2-րդ չափաբաժնի մասով, և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լ. Ոսկանյան

Անդամներ՝ Տ. Ոսկանյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան